անգամ զինուորք Բդեշխին, եւ սակաւ առ սակաւ ընտելացուցեալ զԱրաբացիս հաստատեցան անդ. եւ 1725 յամին Նորոգեցին նոր չինութեամբ եւ ընդարձակեցին, և յաւուրս մեր չինեցին հիւրանոց ծախիւք Սպանիոյ թագաւորին, որ յանուն Սպանիացւոց Նուիրեալ իսկ էին։ Իսկ վանքն Հայոց որ կոչի տուն Եղիսաբեթի՝ նուիրեալ յանուն Ս. Աստուածածնի, է արտաքոյ գիւղին. Մարինոս Լատին չկամելով յիշել զանուն Հայոց, ասէ՝ կառուցեալ 'ի պատուական ձեռաց, ուր ընդ առաջ եւ Եղիսաբէթ Ս. Կուսին Մարիամու, և կոչեն Այցելութիւն Ս. Կուսին. Եւ 'ի տարւոջ միանգամ նախատօնակ առնէաք անդ ասէ։ Իսկ 'ի սմին ժամանակի կոտորեցին Արաբացիք զկրօնաւորս և կործանեցին զվանքն և զեկեղեցին, և մնաց այնպէս աւերակ 'ի բազում ժամանակս։ Եւ 'ի վերջոյ տիրեցին Լատինք եղեալ դուռն երկաթի, և նորոգեալ զեկեղեցին, սկսան պատարագել անդ, գտին ինքնաբուղխ քաղցրահամ ջրհորն. և զարձանագիրս Հայկական տառիւք գտեալ յաւերակաց. զմանս խորտակեցին և զայլս թաղեցին, և 'ի վերայ դինետան, որ ցարդ կայ կանգուն՝ կանգնեցին Խաչ փայտեայ և սահմանեցին զերեզմանատեղի կրօնաւորաց. առ ընթեր սմա է և գերեզմանատունն. իսկ զայդիս եւ զձիթենիս, զմանս յափշտակեցին Արաբացիք, եւ այլքն անկան 'ի ձեռս Լատինաց։ Եւ մերձ վանացս յաւուրս մեր չինեաց Հաննա գառնոյ տուն մեծ. եւ ապա վաճառեաց զայն վանահօր Ռուսաց. և նորա գնեալ զայդիս և զծառատունկս ընդարձակեաց յոյժ զսահմանն, չինեալ տունս և բնակարանս և զեկեղեցիս իսկ։ Տե՛ս Նաե՛ 'ի Գիրս Հանայ Էրդապեդի. Պատմ. Երուսաղէմի. Երես 329։

Ի սմին ժամանակի Յոյնք և Վիրք յարուցին զանհեղեղ խնդիրս և սկսան խօսիլ այսր անդր 'ի քաղաքին, թէ վանք Ս. Յակոբայ լեալ իցէ ազգին Վրաց, և թէ Հայք յափշտակեալ են զայն. լուեալ զայս Գրիգորի Պատրիարքի, ազգարար դատաւորին կոչել 'ի քննութիւն։ Եւ նա կոչեաց զՊատրիարքն Յունաց Թէոփանէ, զտեսուչն Վրաց Նէոփիտոս, և զերիս Վրացի վարդապետս ընդ նմա, զփոխանորդն Հայոց Տօնիկ որդի Մալիճայ, և զփոխանորդն Լատինաց Թէոդորոս։ Սոքա ամենեքեան յանդիման եղեն դատա-